



ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »

Երեսամսեանի համար
Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »

Անկերիսայի համար
Տարեկան 2.50 ռ.բ.
Վեցամսեայ 1.25 »

ՎԱՆՈՒԿ ՎՃԱՐԵԼԻ

Իսկուցանելու տարիս
երեսին համար 40 սակարկ
ե. իսկ վերջին երեսին համար
20 սակարկ ե. երեքին
սակարկ սակարկներու համար
20 ՕՊ զեղջ կըլլայ:

ՇՆԱԲԻՐ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ԶՈՐԵՐՇՈՒԹԻ ԵՒ ՇՈՒՄՈՐ ԵՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկեչ
ԽՈՐԱՊՐԵՍԻԱՆԻ ԽԱՅԿԻՆ

—

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ յեմ տրուի

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՇՆԱԲԻՐԻ 1900Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Փետրուար 1ին կսկսի «Ճար-
ժուժ»ի երրորդ տարի շրջանը հե-
տեւեալ պայմաններով .

Պոլիարիոյ համար տարեկան 12 Ֆր.
» » վեցամսեայ 6 »
Արսասահմանի համար տարեկան 15 »
» » վեցամսեայ 8 »
Անկերիսայի համար տարեկան 3 ռոպ.
» » վեցամսեայ 1.50 »
Պոլիարիոյ համար ձեռքի 15 սակարկ
Արսասահմանի » » 20 »

Բաժնեգիրները կանխիկ են :
Ամէն բաժանորդ իր հասցէին
հետ մէկտեղ պէտք է բաժնե-
գիրը զրկէ, ապա թէ ոչ «Ճար-
ժուժ» չի զրկուի :

Մեր գործակալներէն կը խնդ-
րուի հազորդել մեզ՝ չը վճարող
բաժանորդներուն անունները,
որպէս զի այդ մարդոց թերթերը
զազրեցնենք :

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԿՆԵՐՈՒՆ

«Ճարժուժ»ի երկրորդ տարե-
շրջանը աւարտուելու մէկ ամիս
մնաց . մեր այն ամէն բաժանորդ-
ները որոնք մինչեւ հիմա չեն
վճարած . թող բարեհաճին զըր-
կել իրենց բաժնեգիրները :

Փետրուարի 1ին պիտի սկսի
երրորդ տարեշրջանը . նախորդ
տարուան պարտքերը չը վճարող
պիտի «Ճարժուժ» չը պիտի զրկուի :
Փետրուարին պիտի յայտարար-
ուին նաեւ բոլոր ա՛յն բաժա-
նորդներու և գործակալներու
անունները, որոնք խիղճը ունին
հայ թերթի մը վարձքը ուտելու :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Աղարիա Մամճեան ընկի Շա-
պին-Պարահիսարցի, 25 տարե-
կան երիտասարդ մը, կարճահա-
սակ, նրբակազմ և բարձունք ու
4—5 տարի է որ այս կողմերը
կը գտնուի եզեր . կը խնդրենք
ապին ընթերցողներէն որ սոյն
երիտասարդին վրայ, եթէ տե-
ղեկութիւն մը ունին, հաճին
լուրագրութեանս իմացնել :

ԵՐԿՈՒ ՄԱՐՏ

Կրթիւթեամբ և ընկերական մա-
րութեամբ յատկութիւններով օժտուած
ժողովրդներ մէջ՝ հնազանդ և վա-
սակարգազարտ, հանրային հիմ-
նարկութիւն ու գործ վերանորո-
գելու կամ թէ բոլորովին ոչնչա-
ցընելու համար՝ զազարարա-
կան, բաց ճակատ, կռիւ է մը զ-
վում : Այդ տեսակ պայքարներին
մէջ հայհոյանք, ինտրիգներ,
անձնական կրքերին գոհացում
տալու տենչ են . կամ բոլորովին
չեն լինում, կամ թէ կամքի ու-
ժով զսպում են : Կարճ խօսքով
բարոյապէս և ֆատարապէս բարձր
ու կրթիւթեամբ ժողովրդներին մէջ
«մարդ անհատ» կարողանում է,
և շատ անգամ՝ ստիպում է ին-
նում, իր վատ ու անասնական
ձգտումները սանձահարել, երբ
խնդիրը վերաբերում է ամբողջ
հասարակութեան կենսական շա-
հերին :

Դժբախտաբար հայերիս մէջ
այդպէս չէ . շատ անգամ գաղա-
փարական պայքարներին մէջ գոր-
ծւն անհատը դուրս է գալիս իր
անասնական ամբողջ կերպարան-
քով և հոգով . հասարակական շահը
ուտքի չտակ է ընկնում . սուտը,
խաբերալուծութիւնը, սև կիրքը,
ինտրիգները բացարձակ և ան-
պատկառ կերպով գործ են զըր-
վում երեւակայական յաղթանակը
տանելու, անհատական ազատ
կրքերին գոհացում տալու հա-
մար :

Արի չկերպ էլ չէր կարող լի-
նել . մեր սմեռակրթիւթեամբ և պար-
զացած գաղափարով մեծամաս-
նութիւնը անգամ՝ իր հոգու և
սրտի խորքերում՝ զեռ կրում է
ստրկական ազտոտ յատկութիւն-
րի զգալի մնացորդները : Մի
կողմ թողնենք այն հանգամանե-
քը, որ մեր հանրային կենսութիւն
մէջ գերակատարներ հանդիսա-
նում են և բազմաթիւ գոհակիր,
ազտոտ խառնուածքով նկարա-
զիրներ, որոնք թէ սարուկ են,
թէ բռնակալ . ուրեմն և օժտված

երկու տեսակ զըզվելի տիպերի
զըզվելի յատկութիւններով : Եւ,
տարաբաղաբար, այդ տեսակ-
ները աւելի շատ են մեր մէջ :
Մեղաւորը գրանք չեն—այլ մեր
ստրկութիւնը, մեր արեւելեան
բռնակալական ազտոտ միջա-
կայքը : Ստրկ չենք լինի մենք,
կը փոխվի և մեր միջավայրը,
կը փոխվի և մեր նկարագիրը :
Եւ քանի հայը սարուկ է, քանի
նրա սիրտը ցեխոտ է, նրա ա-
մէն գործի մէջ կանդ բազարվեն
և ստրուկի ազտոտ յատկութիւն-
ները : Գաղափարական ազտո-
վելուց յետոյ էլ դեռ մեր մէջ
շատ կեղտոտութիւններ պէտք է
լինեն . կատարեալ ժողովրդ-
դառնալու համար՝ մեզ սերունդ-
ներ և ամէն ազտոտ երեւոյթի
դէմ կատարի կռիւ է հարկաւոր :
Մենք երկու կռիւ պէտք է
մղենք միշտ— ներքին և արտա-
քին— դուրս ներքինը աւելի կա-
տուղի կերպով :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցեալները Ազգ. Հնչակեան Յեղ.
կուսակցութիւնը հրապարակային
ժողով մը ունեցաւ : Ատենախօսելու
համար հրաւիրուած էին Մոլոտովեան,
Մ. Յ. և Պոպոնկին Ս. Մ. տեղէս ալ
Ս. Յ. հետեւաբար կուգամ Մարտա-
կաններու սկզբունքը եւ ժողովրդի
վրայ թողուցած ազաւորութիւնը
հազորդի : Առաջին անգամ երբ ժո-
ղովը բացուեցաւ, ատենապետը տասը
վայրկեանի շափ խօսեցաւ . կարծես
խօսածն ալ դերի մը կտոր էր որ կը
կատարէր «Նո՛ն հո՛ն աւերումի ու
արկունի երկիրը» կրկնելով : Բան մը
չի հասկցանք թէ ի՞նչ կուզէր ըսել .
երանի թէ ըսածներն ալ չըթուենք
բարախումբի մէջ չի կայանար . ասոր
այսչափ : Ասոր յաջորդեց Ս. Յ. իր
նիւթն էր «ուժերը խնայենք» եւ
այնչափ խօսեցաւ որ նիւթը չի վեր-
ջացաւ :

Այժմ անանք թէ ի՞նչ ըսել է
«ուժերը խնայենք» . Ա. ցոյց չընենք .
Գ. հայտ կային խուժեր չունենանք
Գ. զէնք չի փոխադրենք որ բոնուին
ու հայ ազգին ահազին վնասներ հաս-
ցընենք :

Մէկ խօսքով այս ճամբաները
մեզ զէպի ոչնչութեան կը տա-

նին . ըսաւ պատուելին, ես չեմ հա-
ւատար թէ այսպէսով (այսինքն դաշ-
նակցականներու սկզբունքով կամ
գործելու եղանակով) հայ ազգը կա-
զատի ու եթէ երբէք ազատուու ալ
ըլլայ չէ կարելի որ ինքզինք կա-
ռավարէ, եւ կամ իր գոյութիւնը
պահպանէ . հետեւաբար մենք պէտք է
զարգանանք, գիտակցութեան գանձ,
հայ ժողովուրդ, պտալով (զայրացկոտ)
որպէս զի կարող ըլլանք ազգին գո-
յութիւնը պահպանել : Անշուշտ վե-
րոյնչեալ կտորէն կարող էք գաղա-
փար մը կազմել :

Երկրորդ ատենախօսն էր Ս. Մ. ա-
սիկայ ալ բան մը խօսեցաւ, ամա
ի՞նչ, ըսածը ինքն ալ չը գիտեր .
ինչո՞ւ . շատ պարզ է, քանի որ պա-
րուն բառարանէն գոց ըրած էր քանի
մը բառեր շարելը միայն : Այս ալ
ինքիւր քէֆին կուզէր իր նախորդը
պաշտպանել . ասոր ալ հոչակաւոր
կէտը սա է թէ «երկիրն մէջ յեղա-
փոխական չիկայ այլ ինքնապաշտ-
պանութիւն կայ» . ի՞նչ կը հասկնաս
ասկէ ընթերցող :

Երրորդ ատենախօսն էր Մ. Յ. այս
ամէնուն զրուխը լուսց . Չեմ գիտեր
թէ ասոր խօսածէն քանի՞ տեսակ
սկզբունք գուրս վիճեց : Ես, միջին
հաշուով, գաայ 52 սկզբունք : Ա-
սոր նիւթն էր «մեր քաղաքակա-
նութիւնը» : Մեր քաղաքականու-
թիւնը ըսելով պէտք է հակահանք
վերակազմեալ Ազգային Հնչակեան
քաղաքականութիւնը . նախ հակա-
ցուց իրեն յիշեալ կազմակերպութեան
վերաբերելու յետոյ փրփրելով ըսաւ .
այժմ մեր կազմակերպութեան հիմը
գրուած է երեք սիւներու վրայ . ասկէ
կրնանք հասկնալ թէ անցեալ տարի
պատաստի վրայ գրուած էր, հիմայ
այս տարի ապառաժը փոխուեցաւ
սիւնի . թերեւս օր մըն ալ ապա ըլ-
լայ : Յիշեալ երեք սիւներէն մին է
«տանիկ կատարութեան նիւթն ու
չէրիքը գիտեալ, երկրորդը հայ ազգը .
իսկ երրորդը եւրոպական քաղաքա-
կանութեանը հետեւիլ» . այժմ պէտք
է, նիւթն ու չէրիքի բոնած քաղա-
քականութեան խիստ մօտէն ծանօ-
թեանալ . իսկ երկրորդ հայու մտքերը
պատարասել զպրոցներ բանալով,
ուրիշ ոչինչ ներկայիս . ապա եր-
րորդը ալ հիշ մի հարցունէք, տամա
խաղանք : Գիտէք ի՞նչպէս, զրես
բոլորով, խաբես խորքով . (կարծես
թէ խրճուղի պիտի խաբենք ու տամա
պիտի ելնենք) . Ռուսին բան մը ըսե-
լով, Անգլիային բան մը ըսելով եւ
միւսին սակոր մը նետելով՝ մեր հա-
ցին իւր քսենք, միայն խրատելով
այն սէրութիւնը որն որ մեծ շահ
ունի Տանկաստանի մէջ ու անոր մի-
ջոցով ոտքի ելնել, այն ատեն էրբ

ամեն բան կատարուած կրկնայ ինքնին . ինչպէս բար համատու . պիտի նկարագրեմ որովհետեւ այս սկզբունքը կը փոխուի յաջորդ ժողովին . այս սկզբունքը բազմակողմանի նկարագրելու համար խորհեցայ թէ թանաք չի պիտի բուէ . հետեւաբար կը փակեմ : ինչպէս նախորդ յօդուածովս բաժնէ Սեղապիւն Հնչակեան պրօպագանտան Արմենիայի կտորը ձեռքերնին բռնելով հիմայ ալ իրաւունքի մէկ երկու թիւերը առնելով ամբողջօրէն փաստարանն զարձած են կրտսեր Գաշնակցական մը . կեցցեն . երեք սիւններ :

ԻՊՏԵԱԿ

ԹԱԻՐԻՉ , 25 ԳԵՆԻՏ .

Այժմ անցնենք կատարված զեղծումներին .

ԺԼ. Բժիշկին 30 թուման արժէքով մի նուէր տրուելը արդեօք զեղծում չէ՞ (տես Շարժում թիւ 158) .

ԺԲ. Մինաս Չերսուի Լ'Առմէնի թերթին 10 թուման նուէր գրկուելու զեղծում չէ՞ (տես Շարժում թիւ 158) .

ԺԳ. Մշակ լրագրում մի հերքում տպելու համար հեռագրի 4 թուման վատնելը զեղծում չէ՞ (տես Շարժում թիւ 158) .

ԺԴ. Տեղեկագրի մէջ «ե այլ ինչ» գէտ նշանակված 2,607 դրանի մի թէ զեղծում չէ՞ . Արդեօք այդ «ե այլ ինչ» մէջ չեն թաղնված մեր յիշած 11—12—14 զեղծումները

ԺԵ. Առանց վարչութեան անդամներ զիտակցութեան և հետեւաբար առանց օրինաւոր որոշման, նախագահի կողմից գաղթականներ զբայ ծախսված փողերը զեղծում չէ՞ նշանակում :

ԺԶ. Գեղարցի հասարակ և

սովորական ճանապարհորդների համար իբրև զազմականներ գրամ վատնելը զեղծում չէ՞ . Մի թէ վարչութիւնը իրա քարտուղարի միջոցաւ այս մասին առաջնորդից խորհուրդ չէ՞ր հարցրել և առաջնորդը մի թէ չէ՞ր պատասխանել . որ Գեղարցիները զազմական չեն , այլ պարզ ճանապարհորդներ են , որոնք միշտ սովորութիւն ունեն Ռուսաստան զնալ և փող աշխատիլ . հետեւաբար հարկ չկայ նրանց օգնել , այլ միմիայն նրանց զիւրութիւն տալ իրանց ձեռքում ունեցած անցագրերը հիպատոտարանից վաւերացնելու :

Ահա մենք վերջացրինք մեր փաստերն և ապացոյցները . արդեօք մեր «մեծամիտ» նախագահը նորից պիտի ճգնէ ինքնիրան արդարացնելու , և մեր շատերին ճշմարիտ գրածները հերքելու Այսպիսի ազգաները պէտք է լաւ համոզվեն , որ իրանց ստի տակ գանձած հողը ցելստէ . խոր և կպչուն ցելս , այնպէս որ , քանի ժամ գան , այնքան խորը կը գնան և ամբողջ մարմնով ցելսի տակ կը թաղվեն

Մարդ եթէ մի քիչ ամօթի զգացում ունի , պատուախնդրութիւն ունի , այսքան ճշմարիտ քննադատութիւններ ից և փաստաւոր ու սխալ քայլերից յետոյ , կը սթափվի և իրա ուղղութիւնը կը փոխէ . յամաւրելը արդէն զոյս թիւն ունեցած չարքներ զբայ նորանոր շարիքներ կը բարդէ , և այդպիսի յիմարները միշտ կը տուժեն :

Մեր փաստերի և ապացոյցների ճշմարտութիւնը ընթերցողի աչ-

քի առաջ դնելու համար , հարկաւոր ենք համարում ընկերութեան կանոնադրութիւնից մեր յիշած յօդուածները իսկու թեամբ այստեղ արտագրել :

1. «Թաւրիցու Հառահայ Բարեգործական Ընկերութեան նպատակն է նպատակել իրական սեռի լուսաւորութեանը՝ Ա. բանալով և իր հաշուով պահելով զանազան տեսակ իրական սեռի դպրոցներ : Բ. իր միջոցներով օժանդակել զայս թիւն ունեցող իրական զբոսայրայրներն» :

15. «Ընդհանուր ժողովը իր միջոց ընտրում է նախագահ , գանձապահ և «հինգ» խորհրդականներ , իսկ վարչութիւնը իր միջոց քարտուղար» :

17. «Վարչութեան անդամներ ից մի որ և իցէ մէկը հեռանալիս , ընդհանուր ժողովը նորա փոխարէն ընտրում է մի ուրիշին» :

38. «Կանանց Ընկերութիւնը իր գործունէութիւնը սկսում է Լիւլաւ թաղի աղջկանց դպրոցին «բազմակողմանի խնամք» տանելով , քանի որ նորա երեւան գալու պատճառը եղել է Լիւլաւ թաղի աղջկանց դպրոցը . ժամանակի ընթացքում համեմատ իր նիւթական միջոցներին , նա տարածում է իր գործունէութիւնը և Լիւլաւ թաղից դուրս» :

Ուրեմն , կարող ենք հետեւցընել թէ ընկերութեան փողերը իրանց նպատակին չեն ծառայում

ՄԻՐՉԱ

—)(—

ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ԻՐ ՓԵՍԱՆ

Մահուա բաշայի Սուլթան Համբին գրած նամակը , զոր Բարիզի բոլոր թերթերն հրատարակեցին :

Ձեր Վեհափառութեան իբր պաշտօնեայ գործածած անձնաւորութիւններն , ընդհանրապէս սուրին ստտիճանի և տգէտ մարդիկ են , ապիկար ծերեր կամ ստախոս և կաշառակեր խարդախներ . բոլորն ալ նշանաւոր փողաքանքի . հարստահարութեան , կողոպտաւի և անձնասիրութեան մէջ : Ահա այս պատճառաւ է որ պատուաւոր և առաքինի մարդիկ չեն կարող մերձենալ ձեր վեհափառութեան :

Ձեր կազմած և ընտրած կառավարութեան նմանը ո՞ր երկրին մէջ կայ . այսպիսի սկզբունքով կարելի է ժողովրդիկան մը երջանկութիւնը ապահովել . և ձեր այս ամուլ ճամբուն մէջ ունեցած յամառութիւնն , մեր աղբիւն վերջնական կործանումէն զատ , ուրիշ ի՞նչ արդիւնք կըրնայ յառաջ բերել :

Հասարակաց կրթութեան , գանձին և ծովային զօրութեան սղորմելի վիճակը , մէկ խօսքով յիտին ստտիճանի հիւժումն և թշուառութիւնը որոյ մէջ կը ժպն նախարարութիւնները , բոնապետական ստեղծմէն սրինտտած բոլոր սրտերէն պոս թկացող երկրաշաղի աղաղակներն , փոռաւոր փորձեր են , որ , վճռական կերպիւ կը ցուցնեն թէ՞ ո՞ր ստտիճան բռնակալութեան հասած են ձեր գործերն ու խորհուրդները :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՈՐՏ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ

1. ԱՏԵՆԱՊԵՏԸ

Երկրէն զեռ նոր դուրս ելած էի եւ այն քանի մը ամիսները , գործնք արդէն Եղիպտոսի մէջ անցուցած էի անգործութեան անտանելիութիւն երկար իրենց ժամերով ձանձրոյթի գազաթնակէտին հասցուցած էին զիս : Հայրենիքին տաղնապնդով ու յոյսերով հարուստ կեանքէն ետքը , գերեզմանի մը պէս կը ճնշել սիրտս Եղիպտոսէջ գաղթականութեան աղքատ ու ստփակ միջավայրը , ուր ազգային կենդանութեան միակ նշանները շարժել շարժել զանազան սեղերէ ստացուած հայ թերթերն ու անոնց ընթերցումին յաջորդող կուսակցական կուտակուած կիբքերու պայթումն էին : Բայց բարեբաղբար , առանց գիտնալու՝ արտաքոյ կարգի տեսարանի մը բացման մտերբէնտը զրած էի փարաւոններու երկիրը . այնպէս որ շատ չանցած՝ զուարճութեան ու խնդուքի առատ

նիւթեր եկան բացառիկ պէսպիսութիւն մը ընծայելու մեր միօրինակ ժամանցին :

Օրին մէկը յանկարծ իմացանք որ «Ազգային-վերակազմաւորութեան» փոխական կուսակցութիւնը ընդհանուր ժողով մը պիտի գումարէր ու ժողովատեղին ալ Աղեքսանդրիան որոշած էր : Կարծեմ աւելորդ է ըսել թէ ուրախութեանս չափ չկար . ալ մէկ հարուածով մոռցած քանիք մը ամուսնային միջոցին քաշածներս՝ կօրհնելի բաղդը . որ այս տեսակ հազուադէպ մէկ առիթին զիս Եղիպտոս նե սեղու չնորձքը ըրած էր : Արդէն տեղական Գործերու ռեֆրալն կուտոցը բերնէ բերան տարածած էր պատգամաւորներու ստուար խումբի մը մեկնումին լուրը , աշխարհի այն բոլոր ճաշիճներուն կողմէ , ուր փրկութեան այս աշարկու բանակը իր մասնաձեւերը հաստատած է : Ու մենք կը մտածէինք , բայցի Հայաստանն , ուր խոնկեմութիւնը միայն արգելք եղած է իրենց մուտք գործելու՝ ո՞ւր չկան գորտերու մասնաձեւերը . Թայմըզէն սկսած մինչև Գանդես , ձապա , Չին , Ճափոն : Ուրեմն բաղդը պիտի ունենայինք տեսնելու կատարեալ ցուցահանդէսը աշխարհի այն բոլոր հայ հերոս-Գործերուն՝ որոնք արդէն Լօնտոնի մէջ գումարուած յաւերժայիշատակ ընդհանուր

ժողովէն ի վեր իրենց կրկնցներով ա՛յնքան սիրալի էջեր աւելցուցած էին Հայաստանի անտիպ պատմութեան : Սակայն քիչ մը ետք իրականութիւնը եկաւ մեզի հասկցնել որ մեր այս երեւակալութեան մէջ քիչ մը շատ յառաջ գացած էինք , որովհետեւ հակառակ մեր անդոտ սպասումներուն՝ եկած պատգամաւորներուն թիւը հինգէն անգին չանցաւ : Ի՞նչ էր պատճառը որ միւս սպասուածները չէին կրցած գալ եւ կամ թէ եկան ու խոնկեմութեան պահանջներով անհրաժեշտ մնային , մենք չկրցանք լուծել այս գաղտնիքը , որ անշուշտ գաղտնիք ալ պիտի մնայ մինչև որ Լատուոյ մէկ օրը վերջապէս Հայաստանը աղաւելով , «Ազգային-վերակազմաւորութեան կարին փոխադրուած սպարանը՝ խոնկեմութեան մութին մէջ գործուած ուրիշ շատ մը աշարկու գործերուն հետ մէկտեղ այս գաղտնիքն ալ ի լոյս ընծայէ . . .

Սպասուած պատգամաւորներուն ամենէն կարեւորը , որուն հանճարիկ կրկնցին կը պարտի կուսակցութիւնը իր հակադաս յատաջիւմութիւնը իր հակադաս արդէն հասած էր . այդ բազմախառ գործիչը արդէն ամէն տարի կուգայ եղեր Եղիպտոս ձմեռը անցնելու եւ Լօնտոնի մատախուղներուն մէջ պաղած իր

ուղեղը Եղիպտոսի արեւին տակ քիչ մը կազդուելու համար , ուսկայն այս տարի ընդհանուր ժողովին պատճառով սովորականէն կանուխ եկած էր Ամենամեծ հետաքրքրութիւններէս մէկն էր տեսնել այդ Չոլապաղայինը որ կըսէին թէ կրնար երեք օրուան մէջ կուսակցութիւններ տապալել ու վերակազմել , Բարեբաղբար չողեանաէն ելած օրն իսկ արժանացայ զինքը սեանել փողոցը երբ սրճարանէ մը դուրս կեղնէր՝ չըջապատուած զողական մասնաձեւերին անդամներէն , որոնք երկրեւոր լուսութեամբ ու մեծ մարդու մը ճորտը ըլլալու հպարտութեամբ մը կը հետեւէին իրեն : Ընդ ու ճիշդ ճիղուելի կրօնաւորի տիպար մը . սեւ կտր մօրուքով , կարճահասակ , կուրճքը կարծես ուժգին հարուածէ մը ներս քաշուած եւ ուսերը կուտակցութեան կեղրոնին ահապին բեռնի տակ կքած . ահա ամենահզօր կուտակցութեան անձերը վարող գորտը : Անկէ յետոյ ամէն օր կը տեսնելի զինքը Աղեքսանդրիայի փողոցներուն մէջ , մէկ թեւէն տակ լրագրիներու ստուար ծրար մը , միւս թեւէն տակ գաւազանը՝ աթիւն կլլող սեղիլի մը պէս կը թափառէր ամբողջ օրը , անշուշտ ազգին փրկութեան ճամբաները մտածալով : Մահով գորտերը վերջը ինձի ըսին . որ այն յօդուածները այսպէս պաշտելով կը գրէ :

Մեր երկրին կորստեան գլխաւոր առաջնորդն և այնքան վատթարութեան և կուտակուած յանցանաց պատճառն էր։ Չեր թափել տուած արիւնը բոլորին աչաց առջեւ յայտնի են։ Հաշարաւոր մարդկային կեանքեր կորսուեցան, որքան մահմեաւական նոյնքան քրիստոնեայ։

Չեր հպատակները, ձեր բռնապետութենէն ազատուի համար կը փախչին։ Հայրենիքը կը դատարկանայ, անոր համեմատ մուտքերը կը նուազին։ և դուք, ընդհակառակն, իբր նախարարձակ կը շարունակէք դեռ ձեր ամբարտաւան և լիրբ զեխութիւնը։

Կը ջանաք կոտորել այնպիսի գործեր և յիմար ծախքեր, որոնք որ և է պատշաճաւորութիւն չունին, որ և է ահրու թեան մէջ նմանը չտեսնուած, աստիճանաց և պատուանշաններու ստեղծումն, աւազակ նախարարներու և ապիկար մեծ վէճիրի մը ափը 500 էն մինչև 2000 ոսկոյ թոշակ, առանց խորհելու թէ տէրութեան եկամուտը տասը միլիոն ոսկիէն անդին շանցնիր։ և այս ճամբուն մէջ ոչինչ կը կատեցնէ զձեզ։

Դուք ինքզինքնիդ չէ՞ք նուստացներ և բըր գեասպաններու և հիւպատոսներու հրամաններ կը զրկէք զիս կալանաւորելու համար, պատճառելով թէ ձեր կենաց դէմ դուստանցի, և թէ նորին բարձրութեան սուլթանին, կնոջս, գոհարեղենները գողցայ, և երկու զաւակներս, իբր թէ խաբելով, յափշտակեցի, զորս սնչափահաս կանուանէք։

Օսմանեան վեհապետի մը ա-

նարգանք չէ՞ այսպիսի սուտեր հնարել կալանաւորութիւնս դիւրացնելու համար։ Բայց կը բաւականանամ, որովհետեւ կայսրութեան ներկայ տաքնապալից վիճակը կը պարտաւորեցնէ զիս զանց առնել ինչ որ իմ անձնականիս կը վերաբերի, խօսելու համար միմիայն հայրենիքի վրայով։

Մեր երկիրը հարուստ է բաւական երջանկութիւն վայելելու, և կարող սնուցանելու, մեծ գիւրութեամբ, ներկայ բնակչութեան քան անգամ աւելին։ Բայց, աւագ, աւաղակներու խումբ մը վրան ինկած և այսքան հարստութեան և գանձերու ճամբան գոցած է։ Եւ այս ձեր գործոց արդիւնքն է, որ այնքան սիրելի գաւառները, հոգին պատուելու աստիճան, զարհուրեցընող աւերման մը ենթարկուած են։ Չեր անուամբ զանազան պանքաներու յանձնուած միլիոնները, ձեր անձնական շահուն գործածելու նպատակաւ իբր պարզեւ ցրուածներուն և դեռ ուրիշ անթիւ վատնուածներուն հետ միացնելով, Օսմանեան կառավարութիւնը այսօր ահաւոր նաւատորմի մը կրնար ունենալ, որու շնորհիւ կրնտէ մեզի համար կորսուած պիտի չըլլար, կարելի է պատերազմն ալ պիտի չպայթէր։ և այդ պատերազմը յունաց մէջ վրէժխաղութեան զգացումը չպիտի ստեղծէր։ Ասոնք բոլորն ալ նոյնպէս ձեր յանցանքներն են, որ երբէք չպիտի ներուին ձեզ։

Այլ թը արի է ի վեր շատ անգամներ այս խորհրդածութիւնները ձեզ ներկայացուցի։ չը

կրցաք զիտնալ և գնահատել անոնց լաւ կողմերն, և ոչ իսկ հասկնալ իմ անձնուիրութիւնս։ Արեւն, վստահ ըլլալով թէ՛ որքան ատեն Կ. Պօլիս գտնուիմ, պիտի չկրնամ ձեզ լսելի ընել ճշմարտութիւնը, մտածեցի թէ, քանի որ Աուլթանը անկարող է և կը մերժէ մտիկ ընել և հասկընալ, պէտք է ազգը լուստորեմ, և անոր յայտնեմ ներկայ վարչութեան վտանգները և զայն փոփոխելու կարեւորութիւնը։ Վերջապէս այս պարտքը կատարելու և ամէն պատասխանատուութենէ խիզճս հանդարտեցնելու համար է որ Եւրոպա եկայ։

Մահմետական և թուրք եմ. կը պանկամ ծառայել հայրենեացս առանց խտրութեան ցեղի և կրօնի. երկու որդիներս ալ նոյն դիտաւորութիւնը ունին, հոս եկան այս սուրբ պարտակալութիւնը կատարելու մէջ միմիայն ինձ օգնելու համար։

Արդարութիւնը միշտ կը յաղթանակէ և միշտ անյաղթելի կը մնայ։

Տաւուս-Մանուս խաչու
Թարգմ. ՅիՍԷ
Բարիկ. 10 յունվար

ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի գիշեր «Վէսէլլօ» հայ գերասանական խումբը ներկայացրեց «Երեսուն տարուան խաղամուկի մը կեանքը» դրաման։

Ներկայացումը խմբի անգամ Պ. Լեւոն Շաքարեանի օգտին էր։ Սրահը ամբողջովին լիքն էր. այս կարող է հաստատել մեր անցեալ անգամ ասածները—այն է թէ «Վէսէլլօ» խումբը թէ իր

յառաջագիւտութեան և թէ նիւթական օգուտը աչքի առաջ ունենալով պէտք է գոնէ ամիսը մէկ երկու անգամ լուրջ ներկայացումներ տայ։

Գլխաւոր դերակատարները բաւական յաջող կատարեցին։ Տիկին Քնար, որին մի ուրիշ անգամ էլ տեսել էինք, խաղամուկին զննելով, Ամելիայի գերում, այս անգամ աւելի լաւ և կենդանի կերպով կատարեց որդեգիր, պատուաւոր և ամուսինը սիրող կնոջ դերը. մեր կարծիքով միայն մի տեղ բաւական թոյլ երեւաց, այն է երբ հասկացաւ թէ իր փեսացուի նուիրած գոհարեղենները գողցուած են, զօրեղ կերպով չը յայտնեց իր զըզվանքը։ Պ. Բարայիան, չար և վատ խաղամուկի դերում, իր շարժուածքները մէջ չափազանցում էր, բայց ամբողջութիւնը լաւ կատարեց։

Ձորջիւղ, Պ. Պէնլեան, Ամելիայի խաղամուկ ամուսինը, առաջին մասում թոյլ էր, և անբնական իսկ վերջին մասում—տարագիր, աչքատ, և անցեալ կեանքի վրա զըզացած մի ջախջախված հայր և ամուսին, բուական յաջող և որոշ չափով ազգող։

Պ. Ալբերտօ, Ամելիայի և Ձորջիւղի զաւակը, որ մանուկ հասակից իր ծնողներէն բաժնուած նրանց անտանելի թշուառ վիճակի մէջ գտաւ, միջակ կերպով կատարեց ամբողջութիւնը. միայն մօր հետ ունեցած տեսութեան մէկ մասը և հօր հանդիպումը բաւական ազգու էր։

Խաղը ամբողջովին լաւ սպաւորութիւն գործեց։

Նորից շեշտում ենք որ «Վէ-

տեսակցութիւններու պատճառով Լոնտոն տնայացած էր...

Շաքար մը ետքը վերջապէս հասաւ Կակազեանն ալ, Ամերիկայի պատգամաւորը։ Ես միւսներուն պէս շուտ հրապարակ չեղաւ, բայց արդէն անադին տարածայնութիւններ կը պարտէին իր անուան շուրջը. առաջ բուռեցաւ թէ նշանաւոր բժիշկ մըն է, յետոյ գորգի հարուստ վաճառական մը։ Եւ յարցոյցներէն պահ մը կասկածեցանք թէ մի գուցէ Ազգային փրկութեան կեդրոնին իր շուրջը հաւաքած գրամական ոյժերէն մէկը ըլլայ աւ Կակազեանը։ Ասկայն կեսաբացի բարեկամ մը, որ տեսնուած էր անոր հետ շուտով ստոյգ տեղեկութիւնը հաղորդեց ինձ։ Կեսարիոյ զիջողութեան մէկէն էր, տէրտէրի մը գաւակ, աղայութիւնն է վեր միսիոնարներուն թով Շիմալով բողոքականութիւնը ընդունած էր ու անոնց շնորհիւ Ամերիկա ինկած գորգի պղտիկ գործ մը կընէ կզեր։ Այս ծանօթութեան վրայ Կակազեանը տեսնելու բուռն տենչս մեղմացաւ ու երկու օր վերջը իրեն հետ անձամբ ծանօթանալու գուարձութիւնն ալ ունեցայ։

Կէս օրին երբ ընկերով մը հետ

բոս սովորականին ինչօրին ճաշարանէն ներս մտանք, նոր դէմք մը զարկաւ աչքերուս։ Բարձրահասակ, սեւ մազերով ու պիտերով, փոքր գլխով ու աչքերով, դէմքը թուխ մէկը նստած պիթիթէկ մը յօշոտելու վրայ էր։

— Ծօ՛ւս սպուշն է կզեր, յանկարծ բացազանցեց ընկերս ցած ձայնով մը։ Սեղանին միւս ծայրը տեղադրուելէ ետքը զորոմանքով մը փութացի հարցնել ընկերովս։

— Ի՞նչ, միթէ կը ճանչնաս աս մարդը։

— Ինչպէ՞ս չէ, հիմա կը հասկնամ որ աս է կզեր Կակազեան բոսանին, Ամերիկայէն կը ճանչնամ, անցածները քեզի պատմած դէպքիս Կակազեանն է։ Ե՛ւ այ՛ սպուշներ վայ, շարունակեց ընկերս զլուխը թօթուելով, լա՛ւ գտեր ին պատգամաւորներն։

Ընկերս ջիշած դէպքին մանրամասնութիւնները ճշգրիտ չեմ յիշեր, բայց իրողութիւնը հետեւեալն է։

Ընկերս, որ եօթը տարիներ Ամերիկա միս ցած էր, ժամանակին Հընչակեան մըն էր եղած։ Վերջերս ինչայդու թեամբ քիչ մը դրամ աւելցնելով քանի մը ընկերներու հետ կը վճեն երկիր վերադառնալ ու յետփոխութեան գործնապէս ծառայել, սակայն Հնչակեան կուտակցութեան

գրութիւնը վտանգութիւն չէր ներշնչել իրենց։ Կը տեսնէին որ հակառակ կանոնադրի տրամադրութեանն՝ այր ու կին նազարէկեանները անկախաբար կը վարէին ամբողջ գործը, առանց նոյնիսկ հաշիւ մը սաւ բարեհաճելու այն հազարաւոր սուրբներու մասին. որոնք ամէն սարի Ամերիկայի խեղճ հայ բանուորները կեդրոնին կը զրկէին, նուիրատու պարզ գասակարգ միտմիտ վստահութեամբ մը չէր կրնար հետուն խորհիլ, իսկ անոնք որ գրամները կը գանձէին Պիթիթեան անունով միջնագարեան մարդուկի մը աստիճանով թեամբ իրենց բան գործ ըրած էին քողքէ քողք շրջելով անյատակ ստամոքսին լիցնել ու սկզբունին փառարանութիւն կարգայ։ Այս ապօրինաւորութեան գարման մը ընելու նստակալով ընկերովս խումբը Ամերիկայի գանազան քաղաքները ցրուելով կը սկսի մտքերը արթնցնել ու վերջապէս կը յաջողի բնականօր պատգամաւորական ժողով մը գումարել տալ ինչդիրք քննելու համար։ Ժողովին աստեղապետ կը կարգուի սա միւսներն Կակազեանը, որ նախապէս բողոքողներուն ինքզինքը կատարելապէս համակայծիք յայտնելէ ետքը՝ Պիթիթեանի պէս արարածներու ձեռքը գործիք դառնալով խեղճ պատգամաւորներուն ձայները կը բռնա-

Քանի մը օր ետքը Կիպրոսէն եկաւ ուրիշ ոչ նուազ նշանաւոր ջող մը՝ Սըվազիին։ Կայեղադէմ, շիք հազուած երիտասարդ մը, որուն ամբողջ կեանքը, ինչպէս դէմքը աւրջտիկող վաղահաս կնճիւններն ալ կը վիպէին՝ սիրուելիներու գրկին մէջ անցած էր։ Ասոր հետ մեկտեղ երիտասարդ մըն ալ կար կարճահասակ, կլոր չէկ մօրուքով, կատարել փոքրուորի կերպարանքով, հագուստներուն հարուստ ալլաղանութիւնը կը ցուցնէր որ գործածուելէ ետքը աստատանուն ալայէն շնորհուած էին։ Սվազիին քով սպասաւորութիւն կընէ կզեր Կիպրոս, իսկ ընդհանուր ժողովին մէջ աստեղապետ ընտրուեցաւ։ Անունը Ազգայէլ էր. կերեւնայ այնչափ հոգիներ առած էր որ խեղճին հոգին ելած էր։

Յունաստանէն ալ մէկը եկած էր. այնչափ խեղճ ու կրակ որ մեր զըզուրոցներուն առանկերը կը յիշեցնէր. փրկեանի մէջ խահվէճիութիւն կընէ կզեր։ Պ. Չօճուխեան՝ այս էր մականունը՝ շատ քիչ կը խօսէր, որովհետեւ ինչպէս կըսէին՝ երկար ժամանակէ ի վեր յունարէն խօսելու ոտիպուած ըլլալով հայրենի մոռցած էր։ Անոնցմով ամբողջացած էր պատգամաւորներուն թիւը, միմակ Ամերիկայի պատգամաւորին կըսպասէին, ան ալ կըսուէր թէ կարեւոր

